

վանքին մէջ առաջին անգամ կը բռնայ ժառ. Վարժարանը և հայերէն լեզուի ուսուցիչ կը կարգէ Սաչատուր քահանայ Տարոնեցին և հոգաբարձու՝ Ստեփան վարդապետ Տիգրանակերտցին: Եւ որպէս զի բարեկարգ ընթանայ վարժարանը՝ իր յանձնարարութեամբ փոխանորդ կիրակոս եպս. և քանի մը առաջաւոր վարդապետներ տասը յօդուածներէ բաղկացեալ կանոնադիր մը կը պատրաստեն՝ ուսմանց աստիճաններու եւ ուսուցիչներու և ուսանողներու պարտականութեանց վերաբերեալ: Իբր մէկ ու կէս տարի յետոյ Զաքարիա պատրիարք վարժարանը կը փոխադրէ Երուսաղէմ առանձին տան մը մէջ, և ուսուցիչ կը կարգէ Արմաշի վանքին Մուրատ վարժապետը (\* 1848), որ հմուտ եւ խառնուրդ աշխարհական մըն էր ու այն տարին ուխտի եկած էր Երուսաղէմ:

1876-1907 թուականին Ռեմլէի Ս. Գէորգ վանքին տեսուչն էր Մալաթիացի Բարթուղիմէոս վրդ. Սատաղեան՝ որ նոյն վանքին կտակած է տուն մը, խանութներ եւ պարտէզ մը հազար ոսկւոյ արժողութեամբ: Գրծազգեաց միաբան մը Սարգիս Պաղտասարեան Տիգրանակերտցի (\* 1930) բացի իր միւս յիշատակներէն, Ռեմլէի մէջ յիշատակ թողած է վեց մթերանոցներ:

Մինչև վերջին տարիներս Ռեմլէի Ս. Գէորգ վանքը իր յարկարաժիններով կանգուն էր, Հաննէ պատմադիրին վերեւ նկարագրուածին համաձայն. բայց 1927 յուլիս 11ին տեղի ունեցած սոսկալի երկրաշարժին հետեանքով, ինչպէս Երուսաղէմի և շրջակայից, նոյնպէս Ռեմլէի մէջ բազմաթիւ տուններ եւ շէնքեր կործանեցան, ու շատ մարդեր փլատակներու տակ մնացին. Ռեմլէի Ս. Գէորգ վանքն ալ զերծ չմնաց երկրաշարժէն, բացի եկեղեցիէն որ անվնաս մնաց, ամբողջովին քանդուեցան տեսչարանը իր մասերով, ուխտաւորաց սենեակները և քանի մը վանքապատկան կալուածներ: Առ այժմ փլտակները մաքրելով առ ժամանակեայ նորոգութիւն մը կատարուած է, ապագային վերապահելով վանքին ամբողջական նորոգութիւնը, որ անհրաժեշտ է:

